¶ »Õ³ ñùáõÝÇùÇ Ù³ ñ½ù. ¶ ³ í ³ é ² ½ ï áõÃÛ³ 2
Ñ»é: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru

# «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք,գ. Ակունք 16-րդ փողոց,2-րդ նրբանցք 28 հասցեով N 05-008-0116-0001 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ իրականացված բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ

«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Գեղարքունիքի մարզ ք. Գավառ Ազատության 2
հեռ: +(374264) 2 23 29 e-mail:haferdgas@mail.ru

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք,գ. Ակունք 16-րդ փողոց,2-րդ նրբանցք 28 հասցեով N 05-008-0116-0001 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ իրականացված բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝
ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ Թ. ԳԱՓՈՅԱՆ

ԳԱՎԱՌ 2024 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

**13651**

(լիցենզիայի համարը)

ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

(գործունեության տեսակը)

Տրված է «29 դեկտեմբերի 2009թ.» «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ, 378630, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ք. ԳԱՎԱՌ,

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ ազգանունը, անունն ու բնակության վայրը)

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2

No 28 ПМК
No 28 MMS
08409435
2

Գործողության ժամկետը՝ *ԱՆԺԱՄԿԵՏ*

*ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ* (ստորագրություն) Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«Հաստատում եմ»

«Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ

Տնօրեն Թ. Գափոյան

«15» «07» 2024թ.

**ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք,գ. Ակունք 16-րդ փողոց,2-րդ նրբանցք 28 հասցեով N 05-008-0116-0001 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ իրականացված բնակելի տան տեխնիկական վիճակի վերաբերյալ**

Աշխատանքը կատարվել է քաղաքացի Հ.Մանկյանի առ. 11.07.2024թ. դիմումի համաձայն:

Տեխնիկական հետազննության շրջանակներում կատարվել է նշված հողամասում ինքնակամ իրականացված շինության ակնադիտական ուսումնասիրություն:

Հետազննությունը իրականացվել է « Երկրաշարժադիմացկուն շինարարություն, նախագծման նորմեր » ՀՀՇՆ 20.04-2020, «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում » ՀՀՇՆ 30-01-2014- նորմերի և «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրման (անձնագրավորման) մեթոդական ցուցումներ »-ի համաձայն:

Զննվող շինությունը փոքր թեքությամբ տեղանքի վրա 2011 թվականին իրականացված, հատակագծում ուղղանկյունաձև ուրվագծով,մոտ 7.2x12.0մ արտաքին եզրաչափերով բնակելի գործառնական նշանակության, մեկ հարկանի կառույց է(նկ.1):



Նկ.1 Շինության տեսքը

Շինության կոնստրուկտիվ համակարգը լուծված է երկայնական ու լայնական պատերով և վերնածածկով:

Պատերի հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից:

Պատերը իրականացված են բազալտաքարի շարվածքով ցեմենտավազային շաղախի կիրառմամբ:

Պատերում բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են:

Վերնածածկն իրականացված է փայտե տարրերից:

Տանիքը լանջավոր է, փայտե ծպեղային համակարգով, պողպատից ծածկույթով, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Տունը բակային ճակատից ունի աստիճան-հարթակ արտաքին համակարգ,իրականացված միաձույլ երկատբետոնից:

Զննմամբ պարզվեց հետևյալը՝

- Շինության կրող կոնստրուկցիաները չունեն ճաքեր, ճկվածքներ և այլ տիպի վտանգավոր վնասվածքներ: Դրանք գտնվում են լավ տեխնիկական վիճակում:
- Շինությունը գտնվում է ավարտուն վիճակում:

Ելնելով հետազննության արդյունքներից շինության տեխնիկական վիճակը գնահատվում է լավ, իսկ վնասվածության մակարդակը ըստ գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի և հետազննության մեթոդական ցուցումների չափորոշիչների դասվում է 1-ին աստիճան:

Հաշվի առնելով վերը նշվածը և նկատի ունենալով շինության լավ տեխնիկական վիճակը,այն հնարավոր է բնական և անվտանգ շահագործման համար:

Մասնագետ՝ Ռ. Խաչատրյան